

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԴՈՒՆԻ ԶՈՒԹԱԿ» ՆՈՒԱԳԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

ԶԱԻԷՆ ԿՆԵԱԶԵԱՆ
zavenkniasian@yahoo.com.ar

ՄՈՒՏՔ

1960ականներուն լոյս տեսած առաջին յօդուածները, նախ՝ լրագրական բնոյթի, յետոյ՝ գիտահանրամատչելի ուսումնասիրութիւններու ձեւով, միջնադարեան Հայաստանի ուսադիրք¹ ջութակներուն մասին մեծ նորութիւն էին երաժշտագիտութեան համար: Այս գրութիւնները տեսական ենթադրութիւններ չէին, այլ հնագիտական արշաւներու կամ պեղումներու շնորհիւ յայտնաբերուած յուշարձաններու եւ իրերու վրայ գտնուող պատկերներու ընձեռած տուեալներու վերլուծումներ ու քննութիւններ:

Միջնադարեան Հայաստանի այս աղեղնալարային նուագարանները, որոնց համար տարածուեցաւ «Դուինի ջութակ»ներ անուանումը, մեծ հետաքրքրութիւն յառաջացուցին, որովհետեւ նուագածուները գործիքները յենած էին իրենց ուսերուն:

Նուագարանագիտութեան² համար, աղեղնային երաժշտական գործիքներու ձեւաւորման ընթացքին կատարման երկու եղանակ յառաջացած է. եւրոպայի մէջ ընդհանրապէս տարածուած է ուսադիրք տարբերակը, ի հակադրութիւն Արեւելքի, ուր բնորոշ է ոտնադիրք³ տարբերակը: Դուինի ջութակներուն յայտնագործումը կասկածի տակ կը դնէր աղեղնային նուագարաններու կատարման դիրքերու աշխարհագրական սահմանազատման բացարձակ բնոյթը: Դուինեան ջութակներով, Հայաստանը «նոր» երեւոյթներու տարածք կը դառնար եւ ուսումնասիրութեան նոր ճանապարհ կը բանար:

Դուինի ջութակներուն երեւոյթը հետեւողականօրէն տարածելու գործին մէջ անգնահատելի աւանդ ունեցած է հայրենի տաղանդաւոր ջութակահարուհի Անահիտ Տիցիկեանը, որ տարիներ շարունակ հանդէս եկած է տասնեակ յօդուածներով, որոնք տպուած են Խորհրդային Միութեան, Հայաստանի եւ Սփիւռքի մամուլին մէջ: Հեղինակին տասնեակ մը գիտական աշխատասիրութիւններ՝ հայերէն, ռուսերէն եւ անգլերէն, նոյնպէս լոյս տեսած են թէ՛ Խորհրդային եւ թէ՛ արտասահմանեան, ինչպէս

նաեւ հայաստանեան գիտական եւ գիտահանրամատչելի հրատարակութիւններու մէջ: Վերջապէս, 1977ին հեղինակը լոյս ընծայեց մասնագիտական գիրք մը՝ *Հայկական Աղեղնային Արուեստը*, որուն առաջին գլուխին⁴ մէջ բաւական տեղ տրամադրուած է Դուինի ջութակներու երեւոյթին քննութեան ու պարզաբանման:

Մեր աշխատութիւնը նախ կը փորձէ մէկտեղել Յիցիկեանի եւ այլ մասնագէտներու աշխատութիւններու եւ ցիրուցան յօդուածներու մէջ Դուինի ջութակներուն մասին նիւթերը, ինչ որ անյետաձգելի անհրաժեշտութիւն մը դարձած է: Միաժամանակ, ան կը ջանայ համադրել Դուինի ջութակներուն կառուցուածքային առանձնայատկութիւնները, բաղդատմամբ՝ հայկական եւ միջազգային նորագոյն տուեալներու: Վերջապէս, ակնարկ մը կ'ընենք վերակազմութեան փորձերուն:

ԴՈՒԻՆԻ ԱՆՕԹԸ

Դուինի միջնաբերդի պեղումներուն ժամանակ, 1953ին յայտնաբերուեցան կաւէ եւ ապակիէ ամանեղէնի կտորներ: Տարբեր տեսակի ու մեծութեան գոյնզգոյն սկահակները, գաւաթները, սրուակները, կանթեղները եւ այլ ամաններ բացառիկ արժէքի հաւաքածոյ մը կը կազմեն: Միջնաբերդի ներքին շերտին 33րդ բլիջին մէջ բացուած հորերէն մէկուն մէջ գտնուած առարկաներէն հնագէտներուն ուշադրութիւնը անմիջապէս գրաւեց ապակիէ միւս իրերէն զանազանուող, նուրբ կապոյտ ապակիէ, ոսկեդրուագ նախշերով անօթի մը բեկորները: Այնուհետեւ, վերանորոգող Գ. Արեւշատեան անոր նախնական տեսքը վերականգնեց⁵:

Անօթը պատրաստուած է շափիւղա-մանուշակագոյն ապակիէ, դրուագուած ոսկիէ եւ արծաթէ նախշերով: Ձեւը կը յիշեցնէ քիչ մը տափակցած գունդ, բարձրութիւնը 6,5 սմ. է, տրամագիծը՝ 8,5 սմ., կանգնած օղակաձեւ կրնկատակի վրայ: Անօթի նրբութիւնը, գեղեցկութիւնը եւ հարուստ նախշերը ապացոյց են, որ անիկա պերճանքի առարկայ մըն էր, որուն մէջ հաւանաբար արժէքաւոր օճանելիքներ կը պահէին:

Անօթին վրայ տեղադրուած չորս մետալիոններէն մէկուն վրայ պատկերուած է աղեղնաւոր գործիք նուագող երաժիշտ մը: Ան ծալապատիկ նստած է փոքրիկ գորգի կամ փսիաթի վրայ, աջ

ուտքը ծախում է բայց ծախ ծունկը քիչ մը բարձրացած: Հազա՞ծ է երկար թեւերով լայն, ազատ հագուստ: Հակառակ պատկերին փոքրութեան, դիմագիծերը բաւական պարզ ընդգծուած են: Ան ունի մեծ քիթ, նշաձեւ աչքեր, կամարաձեւ յօնքեր եւ մեծ բերան: Բերանը կիսաբաց է, աչքերը՝ փակ: Մազերը կախուած են ականջներէն վար: Շրթունքներուն ձեւը այն տպաւորութիւնը կը թողու, որ կարծես ան ո՛չ միայն կը նուագէ, այլեւ նուագելով կ'երգէ:

Ձախ ձեռքով, երաժիշտը բռնած է ջութակատիպ նուագարան մը, յենած ձախ ուսին: Աջ ձեռքով բռնած է աղեղը, որուն վերնամասը դրուած է ջութակի լարերուն վրայ: Աղեղնային խոշոր գործիքը ալթին⁶ կը համապատասխանէ իր մեծութեամբ:

Գործիքին արտաքին տեսքը կը վկայէ, որ կը գտնուինք ժամանակակից ջութակի միջնադարեան նախօրինակի մը առջեւ, բաւական մեծ նախաջութակի երեւոյթով: Ուշագրաւ է գործիքին արձագանգարանին այսպէս կոչուած «մէջք»ը, այսինքն՝ նեղ իրանը: Դուինեան ջութակներուն յատուկ է բաւական նեղացած մէջք, աջ եւ ձախ կողաբացուածքներով⁷: Այս խիստ հետաքրքրական իրողութիւնը ապացոյց է ժամանակին համար կատարեալ գործիքի մը մասին: Ինչպէս յայտնի է, կողաբացուածքները յառաջ եկան ապահովելու համար աղեղի շարժումը ջութակատիպ նուագարաններու ծայրադիր լարերու վրայ: Կողաբացուածքներու առկայութիւնը հնարաւորութիւն տուաւ հնչարտաբերումը իւրաքանչիւր լարէն առանձին կատարել, առանց մտահոգուելու գործիքին կողերուն աղեղի բախումէն:

Հարկ է նշել, որ դուինեան ջութակներուն կողաբացուածքները նրբօրէն կը միաձուլուին գործիքի ընդհանուր ուրուագիծին հետ ու կը տարբերին ժամանակակից ջութակներուն խիստ ընդգծուած անկիւնաւոր կողաբացուածքներէն: Անոնք շատ նման են կիթարի կողերու ձեւերուն, ինչ որ բաւական տարածուած էր միջնադարեան Եւրոպայի մէջ: Գործիքին յստակ երեւցող վզիկը⁸ կարճ է եւ կը վերջանայ թեթեւօրէն ետ ուղղուած գլխիկով⁹, եզրադիր ականջներով¹⁰: Զութակի իրանին վրայ պարզ կերպով նշուած են երեք լարեր, իսկ գործիքի պարանոցին¹¹ ծայրը կը նշմարուին հորիզոնական ականջները:

Անօթի վրայ պատկերուած գործիքը ուշագրաւ է այն պատճառով, որ որոշ յատկանիշեր **միջնադարաջութերու**¹² տիպին

կը մերձեցնեն զայն: Միաժամանակ, կարգ մը այլ գիծեր բնորոշ չեն յիշեալ նուագարաններու տեսակին:

Միջնադարաջութերու տիպի գործիքները տարածուեցան եւրոպական զանազան երկիրներու մէջ մօտաւորապէս 9րդ դարուն: Ժամանակի ընթացքին անոնց կառուցուածքը նշանակալի փոփոխութիւններու ենթարկուեցաւ. երեւան եկան ուսադիրք սովորական ջութակի եւ ալթի չափերով օրինակներ, ոտնադիրք զանազան չափերով գործիքներ, թաւջութակի եւ աւելի մեծ՝ բամբ ջութակի չափերով յենածողակիր¹³ նուագարաններ: Սակայն, տափակ շրջուած սիրտի ձեւով գլխիկը, ուղիղ, այսինքն՝ գլխիկի նկատմամբ ուղղահայեաց ականջներով, կը հանդիսանայ բոլոր տեսակի միջնադարաջութերու հաստատուն, «կայուն» յատկանիշը:



Դուինի անօթի ջութակը

Դուինեան անօթի գործիքը իր մարմնի ձեւով կիթառաձեւ կախ ուներով¹⁴ տիպական միջնադարաջութ է, բայց ամէնէն կայուն յատկանիշը՝ ճակատին ուղղահայեաց ականջներով եւ շրջուած սիրտի ձեւով հարթ գլխիկը, այստեղ բացակայ է: Անոր փոխարէն, ան արեւելեան գործիքներուն բնորոշ թեթեւօրէն ետ ուղղուած ականջակալ¹⁵ մը ունի, եզրադիր ականջներով:

Դուինեան պատկերը այլ յատկանիշեր ունի, որոնցմէ ոմանք արեւելեան, իսկ ուրիշներ՝ արեւմտեան մշակոյթներուն կը պատկանին: Այսպէս, օրինակ, արեւելեան մշակոյթին անծանօթ է գործիքը ուսին դնելու դիրքը: Նուագելու նման եղանակ իւրայատուկ էր Արեւմուտքի ժողովուրդներուն, անոնց կարգին նաեւ՝ Բիւզանդիոնի, բայց անտարակոյս նստելու ծալապատիկ ձեւը - մանաւանդ աղեղնային գործիք նուագողներու համար - արեւելեան է:

Ուսումնասիրելով այս անօթը եւ դուինեան ապակիէ իրերուն ամբողջութիւնը, հնագէտ Հռիփսիմէ Զանփոլադեանը¹⁶ նշած է, որ անոնք յստակ երկու խումբերու կը պատկանին, որոնցմէ մէկը տեղական արտադրութիւն է, միւսը՝ ներմուծուած, յատկապէս Իրանէն: Անօթը կը տարբերի այդ երկու խումբերէն՝ ապակիի որակով, գոյնով, զարդանկարներու ոճով եւ այլ մանրամասնութիւններով: Պատրաստութեան եղանակով ու զարդարանքներու ոճաբանական տեսակէտով՝ անօթը կը յիշեցնէ բիւզանդական ծագում ունեցող ապակիէ իրերը: «*Դժբախտաբար բիւզանդական ապակեգործութիւնը գիտութեանը մինչեւ հիմա յայտնի է միայն երկու օրինակով*»¹⁷, յայտնած է Զանփոլադեան: Այս իրերը երկու սկահակներ են, որոնցմէ մէկը Վենետիկ կը գտնուի՝ Սուրբ Մարկոսի տաճարը, իսկ միւսը յայտնաբերուած է Կորնթոսի միջնադարեան ապակեգործական արհեստանոցի մը պեղումներու ընթացքին եւ վերագրուած՝ ԺԱ.-ԺԲ. դարերուն:

Թէեւ այս իրերը համեմատուած են Դուինէն պեղուած անօթին հետ եւ նոյնիսկ գտնուած՝ ոճաբանական որոշ ընդհանրութիւններ բիւզանդական արուեստի այլ իրերու հետ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նիւթերու սակաւութիւնը պատճառ դարձած է, որ ուսումնասիրութիւնները յետագային լճանան ու կանգ առնեն: Միայն կանգուն կը մնար բիւզանդական ծագման հաւանականութիւնը:

Զանփոլադեանի դիտողութիւնները սխալ չեն, բայց սկզբունքային փոքր անճշդութիւն մը կայ: Ճիշդ է, որ Դուին գտնուած սրուակը տեղական արտադրութիւն չէ, այլ ներմուծուած - ըստ ցարդ տրամադրելի նիւթերուն - Բիւզանդիոնէն: Բայց հեղինակները կը մոռնան, որ Բիւզանդիոնէն ներմուծուած ըլլալ անպայման չի նշանակեր Կոստանդնուպոլսէն բերուած ըլլալ, ուր, հարկաւ, նշոյլ անգամ չկայ Դուինի ջութակներէն, մանաւանդ

անոնց յատուկ արեւելեան տարրերէն: Դուինի ջութակներու երեսոյթը քննողներուն մեծամասնութիւնը անտեսած է բիւզանդական դարաւոր տիրապետութիւնը տուեալ ժամանակաշրջանին պատմական Հայաստանի մեծագոյն մասին, Փոքր Հայքի եւ նոյնիսկ Կիլիկիոյ վրայ, որոնք ո՛չ միայն սրուակի շինութեան աշխարհագրականօրէն ամենահաւանական տարածքը կը կազմէին, այլեւ արեւելեան ու արեւմտեան տարրերու շփումի վայրը, ուրկէ նոր որակ կրնար ծնունդ առնել:

Այս կարելիութիւնը ժամանակին արդէն նշած էր Փրոֆ. Կարօ Ղաֆադարեանը իր «Միջնադարեան Ապակեգործութիւնը Դուինում» աշխատութեան մէջ. «Կան հալոյդներ ապակէ առարկաներ, որոնք գտնուել են Դուինում, բայց տեղական չեն: Օրինակ, (...) Դուինի միջնաբերդի հորերից մէկում, բազմաթիւ առարկաների հետ միասին, գտնուել է գունազարդուած եւ պատկերաւոր մի նեղբերան զարդանօթ, որի վրայ պատկերուած է ջութակ նուագող մի մարդ, վերջինս ջութակը դրել է ուսին եւ նուագում է ճիշդ այնպէս ինչպէս եւրոպացիք են նուագում: Պարզ է, որ դա տեղական ծագում չունի եւ բիւզանդական է: (...) Եթէ այդ առարկան բիւզանդական չէ, ապա պէտք է ենթադրել, որ արտադրուել է Հայաստանի այն մասերում, որոնք գտնուում էին Բիւզանդիայի ազդեցութեան ներքոյ»¹⁸:

Դուինի ջութակներուն շատ նման օրինակ մը կը գտնենք յունարէն սաղմոսարանի մը մէջ, գրուած եւ նկարազարդուած Կեսարիոյ մէջ, 1066ին: Այս բիւզանդական օրինակին ծագումը աշխարհագրականօրէն ճիշդ խնդրոյ առարկայ տարածքէն է, իսկ պատրաստման թուականը գրեթէ կը նոյնանայ Դուինի ջութակներուն վերագրուած թուագրութեան հետ¹⁹:

Պատկերուած նուագարանը աղեղնային գործիքներու **կիթառ-նախաջութակ**²⁰ կոչուող ենթախումբին կը պատկանի: Այս նուագարանները տարածուած էին լայն աշխարհագրական գօտիի վրայ՝ Անգլիայէն Գերմանիա, Իտալիայէն Բիւզանդիոն, ԺԱ. դարէն մինչեւ ԺԶ. դար, բայց համեմատաբար ակելի քիչ քան ուրիշ միջնադարաջութերը, այն աստիճան, որ երկար ժամանակ երաժշտագէտներուն ուշադրութիւնը չեն գրաւած: Կատարեալ կիթառի ձեւով արձագանգարան ունեցող այս գործիքները միաժամանակ թեթեւօրէն ետ ուղղուած գլխիկ ունէին՝ եզրադիր ականջներով: Կը նուագէին ուսին կամ քիչ մը ակելի վար կուրծքին

յենած՝ կանգնած կամ աթոռի վրայ նստած²¹: Կիթառ-նախաջութակի ամենահին պատկերումը Կեսարիոյ վերոյիշեալ մանրանկարն է:

Եթէ կախ ուսերը բացակայէին՝ դուինեան անօթի նուագարանը պիտի կարողանայինք դասել կիթառ-նախաջութակներու ընտանիքին մէջ:

Ամփոփելով միջնադարաջութերու, կիթառ-նախաջութակներու եւ Դուինի ջութակի յատկանշական տարրերը, կ'ունենանք հետեւեալ պատկերը.-

Դուինի անօթի նկարին վրայ պարզ կ'երեւի նաեւ, որ աղեղնափայտը կոր է, իսկ ծայրերը միացած են մազափունջով: Կատարողի ձեռքը վերէն դրուած է աղեղնափայտին վրայ: Աղեղը բռնելու այս եղանակը յատուկ է երոպական արուեստին:

Ի տարբերութիւն՝ աղեղը բռնելու արեւելեան ձեւին բնորոշ է ձեռքը տեղադրել աղեղնափայտի տակ եւ մատներու օգնութեամբ կատարել մագերու պրկման կարգաւորում: Հայկական ժողովրդական արուեստի մէջ ցայսօր այսպէս կը բռնեն աղեղը՝ նուագելու համար թէ՛ քամանչան, թէ՛ քամանին եւ թէ՛ շաւառը, մինչեւ իսկ նորաստեղծ փոքր բամբիռը:

Միջնադարա- ջութեր	1.- կախ ուսեր 2.- շրջուած սիրտի ձեւով հարթ գլխիկ, ճակատին ուղղահայեաց ականջներով 3.- կը նուագէին կանգնած կամ աթոռի նստած
Կիթառ- նախաջութակ ներ	1.- կիթառի ձեւով արձագանգարան 2.- թեթեւօրէն ետ ուղղուած ականջակալ եզրադիր ականջներով 3.- կը նուագէին կանգնած կամ աթոռի նստած
Դուինի ջութակ	1.- կախ ուսեր 2.- թեթեւօրէն ետ ուղղուած ականջակալ եզրադիր ականջներով 3.- կը նուագէին գետինը նստած, ծալապատիկ

ՀԱՌԻՃԻ ԽԱՉՔԱՐԸ

Ժամանակը ցոյց տուաւ, որ Դուինի գտածոն պատահականութիւն չէր: Նմանօրինակ գործիք մը, բռնելու միեւնոյն դիրքով, յայտնաբերուեցաւ Հայաստան գտնուած խաչքարի մը վրայ, ուր երաժիշտ մը քանդակուած է ուսադիրք նախաջութակով²²: Մինչ կասկածներ յառաջացած էին Դուինի

անօթի ծագման մասին, մանաւանդ՝ բիւզանդական ծագման հաւանականութեան մասին, խաչքարին հայկական ծագումը անառարկելի է, որ աւելի՛ եւս կ'ամրապնդուի հայերէն արձանագրութեամբ:

ԺԳ. դարու առաջին կէսին պատրաստուած խաչքարը յայտնաբերուած է 1961ին: Արթիկի շրջանի Հառիճ գիւղը գտնուող հին շիրիմին վրայ գոյութիւն ունեցող խաչքարը կը կրէ «*Երեմիա երաժիշտ*» արձանագրութիւնը: Խաչքարին վրայ պատկերուած է երաժիշտ մը, հաւանաբար նոյնինքն Երեմիան, որուն ձեռքին միջնադարեան փոքր նախաջութակ մը կայ: Ուշագրաւ է, որ այդ նուագարանը ուսադիրք է: Գիտնականները Դուինի անօթը կը թուագրեն մօտաւորապէս Ժ. դարավերջ-ԺԱ. դարասկիզբը: Տուեալ խաչքարին վրայ ստոյգ տարեթիւ կայ՝ 1245:

Թէեւ գործիքին ուրուագիծերը բոլորովին պարզ չեն, այնուամենայնիւ կարելի է տեսնել որոշ մանրամասնութիւններ: Յստակ կ'երեւի գործիքին վզիկը²³, որ կը վերջանայ թեթեւօրէն ետ ուղղուած գլխիկով²⁴: Այդ ժամանակ, երբ Եւրոպա տարածուած ջութակի ընտանիքին պատկանող գործիքներու մեծամասնութիւնը հարթ գլխիկ ունէր եւ այդ հարթութեան նկատմամբ ուղղահայեաց ականջներ, ինչպէս ժամանակակից համշէնահայերու շաւառը, խնդրոյ առարկայ գործիքը ցայտուն արտայայտուած գալարագիծ ունի, որ մեզի թոյլ կու տայ ենթադրել եզրադիր ականջներու առկայութիւնը: Դժբախտաբար խաչքարին վնասուածքները արգելք են աղելին ուրուապատկերի վերականգնումին:

Հետաքրքրական միւս երեւոյթը գործիքի ուսադիրք բռնելու փաստն է: Այստեղ կրկին Արեւելքի ու Արեւմուտքի յատուկ գիծերու զուգորդման առջեւ կը գտնուինք: Երաժիշտը նստած է ծալապատիկ՝ արեւելեան դիրքով, իսկ գործիքը դրած է ուսին՝ արեւմտեան դիրքով: Ինչ որ անսովոր ու եզակի էր դուինեան անօթին վրայ՝ այստեղ նորէն կը կրկնուի:

Ինչպէս մատնանշեցինք, գործիքին ուրուագիծերը բոլորովին պարզ չեն, ի միջի այլոց, քանդակի փոքրութեան պատճառով: Ուստի, շատ դժուար է, եթէ ոչ անկարելի, կողաբացուածքներուն կամ ուսերուն մասին որեւէ հաստատում ընել:

Ամփոփելով Հառիճի նախաջութակի յատկանշական տարրերը, կ'ունենանք հետեւեալ պատկերը.

Հառիճի ջութակ	1.- կիթառի ձեռով արձագանգարան (?) 2.- թեթևօրէն ետ ուղղուած ականջակալ, եզրադիր ականջներով 3.- կը նուագէին գետինը նստած, ծալապատիկ
----------------------	--

Հետեւեալ ընդհանրութիւնները կարելի է նկատել Հայաստան յայտնաբերուած գործիքներու երկու պատկերներուն միջեւ.

- Երկուքն ալ աղեղնային են, ջութակի տիպի.
- Երկու նկարներուն մէջ երաժիշտները կը նուագեն ո՛չ թէ կանգնած, այլ նստած՝ արեւելեան դիրքով ծալապատիկ.
- Երկու գործիքները ուսադիրք են.
- Պատկերումներուն թուականները պատմականօրէն իրարու շատ մօտ են: Դուինի անօթը մօտաւորապէս Ժ. դարավերջ-ԺԱ. դարասկիզբէն է, իսկ Հառիճի խաչքարը՝ 1245էն:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻԻ «ՋՈՒԹԱԿ»Ը

Միջնադարեան երաժշտական գործիքներու պատմութեան համար նշանակալից է ջութակ կոչուող նուագարանի մը յիշատակումը Գրիգոր Նարեկացիի կողմէ: Ան կոչնակին նուիրած է իր *Մայրեան Ողբերգութեան* ընդարձակ գլուխ մը՝ Բան ՂԲ.ը, որուն վերնագիրն է. «Ի Փայտն Երջանիկ Բարեբաստութեան Ժամահարին Խորհրդածութեան, Աղաչանս Եղեալ Ընդ Կերպարանս Թարգմանութեանն»²⁵: Հեղինակը այս հարուածային ինքնահունչը²⁶, այսինքն՝ կոչնակը, իբրեւ երաժշտական գործիք նկատած է, բաղդատելով զայն իր շրջակայքի ինն երաժշտական գործիքներու հետ՝ *աւագափողը, փող եղջերեանը, զանգակը, սաղմոսարանը, տաւիղը, բամբիռնը, ջնարը, սրինգը* եւ վերջապէս *ջութակը*. «Սկզբնապար նախընթացութեան աղէյարմար **ջութակաց** բարետաւիղ ողբերգակութեանց՝ բարացուցական բամբռան բառացի բարառնութեանց»²⁷:

Լեզուաբաններուն համար, գրաբարեան *ջութակ* եզրին ծագումը դեռ անյայտ է: Առեղծուած մըն է նաեւ այս բառին ստուգաբանութիւնը. նոյնիսկ Աճառեան իր *Արմատական Բառարանի ջութակ* բառ-յօդուածին մէջ ոչինչ կ'աւանդէ նիւթին մասին, այլ կը գոհանայ տարրական տեղեկութիւններով. «ՋՈՒԹԱԿ, *ի-ա հլ*. «մի տեսակ լարաւոր նուագարան» Նար. էջ 243. նոր գրականում նշանակում է «violon», որից *ջութակահար, թաւջութակ, թաւջութակահար*»²⁸:

Քանի որ Նարեկացիի յիշատակութիւնը կը պատկանի Ժ. դարուն, ուրեմն այս խօսքը չ'ակնարկեր այդ ժամանակ գոյութիւն չունեցող ժամանակակից ջութակին, այլ մէկ ուրիշ գործիքի, հաւանաբար նախաջութակներէն որեւէ մէկուն:

Դուինի ջութակներուն յայտնաբերումը փաստեց նախաջութակներու գոյութիւնը միջնադարեան Հայաստանի մէջ: Այսպէս, այն վարկածը, թէ ջութակ եզրը վերագրելի էր ժամանակակից ջութակի անձանօթ նախորդին, բոլորովին արդարացաւ նոր գտածոներու ընձեռած տուեալներուն շնորհիւ:

Այսօր, մեծ հաւանականութեամբ կրնանք ենթադրել, որ ջութակ եզրը առնչուած է միջնադարեան Հայաստանի ուսադիրք աղեղնային նուագարաններուն, իմա՝ «Դուինի ջութակ»ներուն: Ենթադրութեան հիմքը ակելի կը զօրանայ երբ նկատի ունենանք, որ Նարեկացիի գրաւոր յիշատակութեան, Դուինի անօթի, Հառիճի խաչքարի: Ասոնց թուականները պատմականօրէն իրարու շատ մօտ են:

Այսուամենայնիւ, յարմար կը գտնենք միջնադարեան Հայաստանի նախաջութակներուն համար պահել արդէն շրջանարութեան մէջ գտնուող «Դուինի ջութակ» կամ «դուինաջութակներ» պայմանական անուանումները, չմասնագիտացած հանրութեան մէջ շփոթ չյառաջացնելու նպատակով:

ՁԵՌՆԿԱԽ ԴԻՐՔԸ

Ինչպէս միջնադարեան Եւրոպայի մէջ, այնպէս ալ հայկական իրականութեան մէջ նուագածուներուն կանգնած ըլլալու անհրաժեշտութիւնը յառաջացած է մանաւանդ շուրջպարերու եղանակներու կատարման ընթացքին: Այս պարագային, նուագողները կը տեղաւորուէին պարողներու շրջանակին մէջտեղը: Փողային, հարուածային եւ կտնտոցահար լարային նուագարաններու պարագային կանգնած նուագելը ո՛չ մէկ ներգործութիւն ունեցած է նուագարաններու ձեւին, կառուցուածքին կամ կատարման դիրքին վրայ, բայց աղեղնային երաժշտական գործիքներու պարագային, ուսին պահելուն տեղ յառաջ եկած է նուագելու նոր դիրք մը՝ *ձեռնկախ*:

Միջնադարեան Հայաստանի ամենատարածուած աղեղնային նուագարանը եղած է *շաւառնը*, որ գոյատեւելով հասած է մինչեւ

Մեծ Եղեռնի օրերուն: Համահայկական բնոյթ ունեցող այս աղեղնալարային գործիքը շատ մը շրջաններու մէջ պահպանած է հին հայերէն անունը, անշուշտ տեղական-բարբառային տարբերակներով՝ *շաւառ*, *շաւեռ*, *շաւերք*, *շաւիդ*, *շաւիռ* եւն.²⁹: Գործիքը ներկայիս կենսունակ է ընդհանրապէս Հիւսիսային Կովկաս ապրող պոնտահայերու եւ մասնաւորապէս համշէնահայերու մօտ, որոնք զայն կ'անուանեն *քեմէչէ* կամ *քեմենչէ*³⁰:

Շաւառը նեղ եւ երկարաւուն նուագարան է, որ, ըստ գիտական դասակարգման, կը պատկանի *շշաձեւ* աղեղնայիններու ընտանիքին³¹, եւ իր արտաքինով շատ մեծ խցանով շիշի տեսք ունի: Գործիքը երեք հատուած ունի՝ իրան, վզիկ եւ գլխիկ: Գլխիկը շրջուած սիրտի ձեւ ունի, հարթ ճակատով, որ սրածայր կ'աւարտի: Այս մասին խորութիւնը գրեթէ 8 սմ. է, ետեւը փորուած է՝ ստեղծելով սնամէջ տարածութիւն, իսկ ականջները ուղղահայեաց կը մտնեն հարթ ճակատէն եւ դուրս կ'ելլեն ետեւի փորուած պարապուրեան մէջ: Լարերը նախ կը մտնեն գլխիկի հարթ ճակատի հիմքին մօտ գտնուող երեք փոքր անցքերէն եւ ետեւէն կ'ամրացուին ականջներուն: Գլխիկի ծաւալն ու խորութիւնը պատահական չեն, այլ, ինչպէս պիտի տեսնենք, գործառական նշանակութիւն ունին: Վզիկը կարճ է եւ միաձոյլ՝ թէ՛ իրանին եւ թէ՛ գլխիկին:

Շաւառի կատարողական ամէնէն հետաքրքրական յատկութիւնը կը բացայայտուի երբ նուագածուն կանգնած է. այս վիճակին՝ գործիքին դիրքը *ձեռնկախ* է: Ասիկա գործիքը նուագելու հիմնական դիրքն է եւ պայմանաւորուած է գլխիկին կառուցուածքի առանձնայատկութեամբ: Կատարողը նախ ձախ արմուկէն կ'անցընէ գունաւոր ժապաւէնը, յետոյ նոյն ձախ ձեռքի բթամատով եւ ցուցամատով օղակ մը կը կազմէ վզիկին շուրջ, «գրկելով» զայն ճիշդ գլխիկին տակէն: Գլխիկի ծաւալն ու խորութիւնը չեն թողոր որ գործիքը սահի դէպի վար. այսպէսով, շաւառի մարմինը կը մնայ կախուած դիրքով, առանց որեւէ տեղ կռթնելու: Միայն այս պարագային է, որ կը պարզուի մեծածաւալ գլխիկին գործառական նշանակութիւնը: Այս հանգամանքը շատ կարեւոր է, որովհետեւ աւանդաբար, կատարողը անընդհատ շարժման մէջ է եւ իր քայլերով կը հետեւի պարողներուն, ստեղծելով այն տպաւորութիւնը, որ ի՛նք ալ կը պարէ:

Ա՛լ ասելի հետաքրքրական է տեսնել, երբ հայերու կենցաղին մէջ դեռ տարածուած չէր արեւմտեան աթոռի գործածութիւնը եւ ժողովուրդը կը նստէր գետինը, գորգերու կամ փսիաթներու վրայ ծալապատիկ, իսկ շաւառը կը նուագէին նոյն ասանդական կախովի դիրքով եւ ոչ թէ ոտնադիրք: Այս իրավիճակը գոյատեւած է մինչեւ Ի. դարուն սկիզբը:

Ներկայիս, շաւառնահարը նստած է աթոռի վրայ, նուագարանը կը տեղադրէ ձախ ոտքի վրայ՝ ծունկէն քիչ մը վեր կամ իրարու մօտեցուցած երկու ոտքերու միջեւ: Երկու պարագաներուն ալ գործիքը բոլորովին ուղղահայեաց չէ, այլ թեթեւօրէն թեքած դէպի ձախ եւ դէպի ետ, այսինքն՝ նուագարանին վերի ծայրամասը ասելի մօտ է նուագածուի մարմնին՝ կուրծքին, քան վարի ծայրամասը, որ անշարժացած է երկու ծունկերուն միջեւ:

Շաւառի գլխիկը ինքնին առեղծուած մըն է, որովհետեւ եթէ դիմենք բաղդատական գործիքագիտութեան, պիտի տեսնենք, որ Արեւելքի մշակոյթներուն բնորոշ են ականջակալին եզրադիր՝ կողմնակի ամրացուած ականջներ, ինչպէս քամանչան, քամանին, նոյնիսկ միջնադարեան Դուինի ջութակները: Իսկ Արեւմուտքի, իմա՝ Եւրոպայի, բնորոշ են ճակատին ուղղահայեաց ականջներ եւ շաւառին պէս շրջուած սիրտի ձեւով գլխիկ: Միջնադարեան Եւրոպայի մէջ, ամէն կողմ կը վխտային շաւառի նման գլխիկ ունեցող բազմազան լարայիններ՝ ջութակէն փոքր գործիքներէն մինչեւ թաւջութակի չափերը գերազանցողներ: Շաւառի գլխիկը, ինչպէս տեսանք, գործառական նշանակութիւն ունի. առանց այս յարմարանքին անկարելի է ձեռնկախ դիրքով նուագել: Պալքանեան լիրան ալ նոյն դիրքով կը նուագուի, բայց գլխիկը շաւառի խորութիւնը չունի, այլ բաւական տափակ է: Եւրոպական միջնադարեան ջութակներու գլխիկները յառաջացած են պալքանեան լիրայի գլխիկէն, որ ներկայ էր Ռուսաստանէն մինչեւ Սպանիա: Աւելցնենք, որ եւրոպական գործիքները վաղուց կորսնցուցած էին (եթէ երբեւէ ունեցած էին), մեծածաւալ գլխիկի գործառական նշանակութիւնը՝ պարզապէս նուագելու այլ դիրքեր գործադրելու պատճառով: Այս գործիքները կը նուագէին ուսադիրք կամ ոտնադիրք, իսկ մեծածաւալ օրինակները դարձած էին յենածողակիր: Այս դիրքերէն ո՛չ մէկը պէտք ունեցած է շաւառատիպ խոր գլխիկին:

Եւրոպական ջութակները մուտք գործեցին հայկական իրականութեան մէջ ԺԹ. դարու կէսերուն եւ շատ արագօրէն որդեգրուեցան ժողովրդական շրջանակներու մէջ, յատկապէս աշուղներու կողմէ³²: Բայց սկզբնական շրջանին ջութակները ընդհանրապէս կը նուագէին ո՛չ թէ ուսադիրք, այլ ոտնադիրք: Օրինակ՝ Աշուղ Զիւանին (Սերովբէ Լեւոնեան, 1860-1909), Պաքուի մէջ 1884ին Սամուէլ Դիլարեանցի հարսանիքին իբրեւ ընծայ ստանալով ջութակ մը, զայն որդեգրեց որպէս նուագարան, լքելով աւանդական քամանին: Բայց Զիւանի իր սիրելի ջութակը կը նուագէր միեւնոյն դիրքով, զոր կիրարկած էր մինչեւ 1884 թուական քամանի նուագելու ժամանակ՝ Արեւելքի յատուկ ոտնադիրք, այսինքն՝ ծունկերուն յենած: Այս երեւոյթը շատ բնական էր. նոյնիսկ կը յիշատակուի, թէ ժամանակին նկարիչ Յովհաննէս Այվազովսկի ինքնաշխատութեամբ սորված ջութակ կը նուագէր, բռնելով «քամանչայի պէս»³³:

Զութակի արեւելեան ոտնադիրք բռնելածելը շուտով հայկական կենցաղէն անհետացաւ, մասնաւորաբար երաժշտական կրթութեան տարածման պատճառով:

Հետաքրքրական է նկատել, որ այն շրջաններուն մէջ, ուր հայերու կենցաղին մէջ դեռ կը գործադրուէր ծալապատիկ գետին նստելու սովորութիւնը, ջութակը ուսադիրք նուագելը ձախ ոտքի այնպիսի դիրք յառաջացուցած էր, որուն նմանը կը գտնենք միայն Դուինի անօթի պատկերին վրայ:

Ծալապատիկ նստելու այս «ջութակային» տարբերակը հետեւեալն է՝ աջ ոտքը բնականօրէն ծալած է, բայց ձախ ծունկը բարձրացած, ձախ ոտքի ներքանը գետնին յենելու պատճառով: Անտարակոյս, յենակէտերու ամրութիւնը կ'ազդէ ընդհանուր մարմնի հաւասարակշռութեան, ինչ որ կ'ապահովէ իրանի սլացիկ պահուածքը: Այսպէս, նուագողին մէջ կը յառաջանայ ինքնավստահութիւն եւ թելերն ու ձեռքերը օգտագործելու կատարեալ ազատութիւն:

«Զութակային ծալապատիկ»ը կը գտնենք նախ Դուինի անօթի պատկերին վրայ, յետոյ՝ Հառիճի խաչքարին վրայ, եւ վերջապէս, հազար տարի ետք հայոց կենցաղին մէջ (ԺԹ. դարավերջ/Ի.

դարասկսկիզբ): Բարեբախտաբար, այս նորագոյն անցեալէն պահպանուած են լուսանկարչական վաւերագրեր:

ԶՈՒԹԱԿ-ՔԱՄԱՆԻՆ

Եւրոպական ջութակներու ներկայութիւնը հայոց մէջ պայմանաւորեց քամանիի նոր տարբերակի մը յառաջացումը, որ կը միաձուլէր երկու նուագարաններուն յատուկ տարրեր:

Նուագարանին արձագանգարանը ստացած է ջութակին յատուկ կողաբացուածքները եւ ընդհանուր ուրուագիծը, ի հակադրութիւն դասական քամանիի ուղիղ կողերուն: Աւանդական քամանիէն պահպանուած են բոլոր միւս բաղադրամասերը՝ 12 լարերը (որոնցմէ 6 ձայնադարձիկ³⁴), մեծածաւալ ականջակալը, կոր աղեղը եւն.:

Մեզի անձանօթ է, թէ այս նուագարանը ունեցած է որեւէ յատուկ անուանում: Այս պատճառով, զայն պայմանականօրէն *ջութակ-քամանի* անուանած ենք:

Զութակ-քամանիին ծնունդ տուող բաւական հետաքրքրական երեւոյթը արձանագրուած է շատ մը երկիրներու մէջ, ուր եւրոպական ջութակի ներթափանցումը ազդած է տեղական աւանդական նուագարաններուն վրայ: Քամանիին կրած կառուցուածքային փոփոխութիւններուն ամբողջութիւնը կը նմանի Յունաստանի Կրետէ կղզիի *վηολιχρωγι* (βιολόλωρα) պարագային, ուր նոյնիսկ գործիքին անունը կը վկայակոչէ ջութակի եւ պալքանեան լիրայի խաչասերումը:

Պատրաստման առանձնայատկութիւն մը՝ ձայնադարձման անցքերու³⁵ ձեւը, ջութակ-քամանին կը հեռացնէր իր երկու նախատիպերէն: Զութակին ձայնադարձիչները *f* ձեւը ունին, շաւառին ձայնադարձիչները շրջուած փակագիծերու՝) (ձեւ, մինչ ջութակ-քամանիին ձայնադարձիչները 7 (եօթը) թիւին ձեւը ունեցած են:

Այս ձայնադարձման անցքերը, այնքան տարբեր աւանդական քամանիի անցքերէն, այսուհանդերձ փոքր մանրամասնութիւն մը ունէին, որ յատուկ է թէ՛ շաւառին եւ թէ՛ քամանիին: Այս գործիքներուն փակագծածեւ անցքերը իրար կը միացնեն ուրիշ երկու կլոր անցքեր, որոնք տեղադրուած են վերի եւ վարի ծայրամասերը: Նոյն սկզբունքով շինուած են ջութակ-քամանիի

ծայնադարձման անցքերը, որոնց ծայրերը, իրօք, երկու կլոր անցքեր են:

Ջութակ-քամանիին գործածութիւնը սահմանափակուած է աշուղական ոլորտին, բայց լայն տարածում չունենալով, գործիքը անհետացած է ասպարէզէն: Բարեբախտաբար մեզի հասած է այս նուագարանին եզակի պատկերում մը, շնորհիւ Գարեգին Լեւոնեանի՝ աշուղ Զիւանիի որդին:

ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ. ԷԴՈՒԱՐԴ ՂԱԶԱՐԵԱՆ

Եթէ Տիցիկեանի անունը կապուած է «Դուինի ջութակ»ի սկզբնական ուսումնասիրութեան եւ մասնաւորապէս երաժշտական շրջանակներու մէջ տեղեկութիւններու տարածման, այս նուագարանը վերաշինելու փորձերը կապուած են հայրենի վաստակաշատ ջութակահար եւ նուագարանագործ Էդուարդ Ղազարեանի անունին:

Թէ՛ իբրեւ նուագարանագործ եւ թէ՛ իբրեւ վարպետ կատարող, «Դուինի ջութակ»ը հրապուրեց Ղազարեանը, որ յղացաւ այս գործիքը վերաշինելու գաղափարը: Անոր որոնումներուն արդիւնքները բաւական հետաքրքրական են: Մեկնակէտ ունենալով Դուինի անօթին պատկերումը, ըստ որուն «Դուինի ջութակ»ը իր չափերով կը համապատասխանէ ժամանակակից դասական ալթին, Ղազարեան պատրաստեց «միջնադարեան ալթ»ը: Յետոյ, անշուշտ հետեւելով Հառիճի խաչքարին պատկերումին համեմատաբար աւելի փոքր գործիքին, ան պատրաստեց «միջնադարեան ջութակ»ը:

Վերջապէս վարպետը կեանքի կոչեց Դուին-թաւջութակը:

Հնչողական տեսանկիւնէ դիտուած, այս գործիքները անթերի են, շնորհիւ Ղազարեանի վարպետութեան: Այս պատճառով ալ, շուտով ընդգրկուեցան 1985ին ստեղծուած «Դուին քառեակ» երաժշտական խումբի կազմին մէջ, որ լայն համբաւ ստացաւ³⁶:

Բայց վերաշինուած գործիքներու արտաքին տեսքը բնօրինակներէն որոշ տարբերութիւններ կը մատնէ: «Միջնադարեան ալթ»ը իր արտաքինով աւելի մօտ է միջնադարեան Եւրոպայի *ոյրնադիրք* միջնադարաջութերուն³⁷, քան մեղմօրէն ընդգծուած կիթառաձեւ կողերով Դուինի անօթի գործիքին: Վերաշինութեան կողաբացուածքները ցայտուն

ընդգծուած խոր բացուածքներ են, գրեթէ նման դասական ժամանակակից լարայիններուն:

Գալով «միջնադարեան ջութակ»ի վերաշինութեան, իր ընդհանուր տեսքով շատ հետաքրքրական է: Բայց, մեր կարծիքով, նախորդին պէս կողաբացուածքները չափազանց ցայտուն ընդգծուած են:

Երկու պարագաներուն ալ, ձայնադարձման անցքերը փակագծածել են, յար եւ նման հին լարայիններուն:

Գործիքներուն ականջակալները հարազատ են պատկերացումներուն, առաջինը քիչ մը դէպի ետեւ ուղղուած, իսկ երկրորդը՝ իւրայատուկ գալարով: Նաեւ ճիշդ են ականջակալները եզրադիր ականջներով, բայց երկուքն ալ կը կրեն չորս լարեր, երբ անօթին վրայ ցայտուն կ'երեւին երեք լարեր, ինչ որ օրինաչափ է հայկական աւանդութեան:

Անշուշտ, «Դուինի ջութակ»ները կեանքի կոչելու գործընթացը նոր սկսած էր, ուստի զարգացման երկար ճանապարհ մը կը սպասէր այս նուագարաններուն:

ՄԱՐՏԻՆ ԵՐԻՑԵԱՆԻ ԴՈՒԻՆԻ ԶՈՒԹԱԿԸ

Բաւական տարիներ ետք, Դուինի ջութակի շատ հետաքրքրական վերաշինութեան մը կը հանդիպինք, գործ՝ հայրենի վաստակաշատ նուագարանագործ Մարտին Երիցեանի: Այս գործիքը ընդգրկուած է “Les Violons d’Arménie” լարային հնգեակի կազմի մէջ, որ ստեղծուած է 2013ին տաղանդաւոր երաժիշտ, «*հայկական վիոլա*»³⁸ի կատարող Գրիգոր Առաքելեանի կողմէ: Երիցեանի այս նոր գործիքը փոխարինեց հնգեակի սկզբնական դասական ալթը:

Հնչողական տեսանկիւնէն՝ այս գործիքն ալ անթերի է, որովհետեւ Երիցեան մասնագէտ է բարձրորակ ջութակներ եւ այլ դասական աղեղնայիններ պատրաստելու արհեստին:

Ձայնադարձման անցքերը փակագծածել են, նման հին լարայիններու, բայց գեղարուեստականօրէն մշակուած: Գործիքին ականջակալը հարազատ է պատկերացումներուն, ինքնատիպ գալարով: Նաեւ ճիշդ են ականջակալի եզրադիր մեծ ականջները եւ արձագանգարանի յատկանշական կախ ուսերը:

Անտարակոյս, այս վերաշինութիւնը խիստ գնահատելի է, որովհետեւ առաջին իսկ հայեացքով մենք կ'անդրադառնանք, որ կը գտնուինք իրայատուկ նուագարանի մը առջեւ:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Աշուղ Զիւանին 1901ին յօրինած է իր ջութակին նուիրուած ստեղծագործութիւն մը, որ քիչ տարածուած ըլլալուն պատճառով կը մէջբերենք ամբողջութեամբ:

Ջութակս³⁹

*Ախ, իմ ցաւս դու կ'իմանաս, մտերիմ ընկեր, ջութակս,
Ուժից ընկած քնած բախտս բարձրացրու վեր, ջութակս.
Աղաչում եմ ծայնդ հանէ
Տխրութիւնը քեզնից վանէ,
Խօսիր իմ ցաւերուս մասին,
Մարդու նման արտասանէ,
Մի ժամու չափ եղիր սոխակ,
Նուագէ ազդու եղանակ,
Եղանակիդ քաղցրութիւնով յաջողութիւն բեր, ջութակս:*

*- Ո՛ր է քու առաջուայ ծայնդ, անուշ գեղգեղանքդ ո՛ր է,
Կարմիր խնձորի պէս փայլող սիրուն կերպարանքդ ո՛ր է,
Թառամել ես, քա՛ջ օգնական,
Ինձ սիրելի, սիրտ սիրական,
Տխուր լարերուդ հնչիւնից
Դուրս է գալիս լաց ու կական,
Սիւնդ ծռուել է մէկ կողմի,
Կուրծքդ կոտրուել է հոգի:
Խղճուկ, դու էլ իմ սրտիս պէս դարձել ես աւեր, ջութակս:*

*- Կրծքիդ վրայ դեղ կը քսեմ, կոտրած սիրտդ շինել կու տամ,
Կը լինիս նախկին ջութակը, մի վհապիր, հին բարեկամ:
Հնչէ, կչկչա, նուագէ,
Ժողովուրդը քեզ փափագ է.
Աշխատիր ինձ ամօթով չընես
Ինձ այստեղ, օտար քաղաք է,
Տունը հաց կ'ուզեն մեզանից,
Զաւակներս սպասում են ինձ անհամբեր, ջութակս:*

- Տասնեւեթ տարի եղաւ, որ դու ինձ մօտ ես գտնուում

Քու պատճառով ես տեսել եմ շատ հարսանիք, խաղ ու խնդում,
 Ութանասունուչորս թուին
 Քեզ ինձ համար ընծայ տուին,
 Բարձրապատիւ Դիլարեանցի
 Սամուէլի հարսանիքին.
 Բաքուի մէջ գտանք իրար,
 Ապրինք մէկս մէկու համար,
 Յաջողակ դառնայ աղեղդ սպիտակահեր, ջութակս:

- Արի, Զիւանուս նեցուկը, արի, կրկին ծեռքս առնեմ,
 Մի երգ ասեմ օտար երկրում, ծայնս քաղցր ծայնիդ խառնեմ,
 Քանի չէ մօտեցել մահը,
 Վառ պահենք ցնծութեան ջահը,
 Այս է պահանջում մեր շահը,
 Փոփոխում է եղանակը,
 Երկուսս էլ հին ենք համարում թէ ես, թէ դու, ծեր ջութակս:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Ուսադիրք = իտալ. "a braccio":

² Նուագարանագիտութիւն = անգլ. organology, ֆր. organologie: Որոշ տեղեր գործածական է նաեւ գործիքագիտութիւն եզրը:

³ Ոտնադիրք = իտալ. "a gamba":

⁴ Անահիտ Յիցիկեան, Հայկական Աղեղնային Արուեստը, Երեւան, Սովետական Գրող, 1977 (զլուփ առաջին՝ «Հայաստանում Աղեղնային Գործիքների Մշակույթի Հին Աղբիւրները»): 2004ին Յիցիկեանի դուստրը վերահրատարակեց գրքին ռուսերէն տարբերակը, համալրուած՝ հեղինակի վերջին տարիներու յօդուածներով, ներածութեամբ, օգտագործուած գրականութեան ցանկով եւ լուսանկարներով:

⁵ Հռիփսիմէ Զանփուլադեան, «Դուինի Պեղումներին Յայտնաբերուած Ապակէ Սրուակը», Հայաստանի Պարմութեան Պետական Թանգարանի Աշխատութիւններ, 1959, թիւ 5, էջ 149-157:

⁶ Արեւելահայերէն ալտ, արեւմտահայերէն ալթ (որոշ տեղեր նաեւ ջութ):

⁷ Կողաբացուածքներ = անգլ. C-Bouts, ֆրանս. des échancrures:

⁸ Վզիկ - տե՛ս թիւ 22 ծանօթագրութիւնը:

⁹ Գլխիկ - տե՛ս թիւ 23 ծանօթագրութիւնը:

¹⁰ Ականջներ = անգլ. pegs, ֆրանս. cheville:

¹¹ Պարանոց - տե՛ս թիւ 22 ծանօթագրութիւնը:

¹² Միջնադարաջութ = անգլ. ֆրանս. իտալ. սպան. գերմ. ռուս. vielle, vièle, viola, fidula, fidel, фидел, եւն.:

¹³ Յենածողակիր = անգլ. spiked, ֆր. à pique:

¹⁴ Կախ ուսեր = անգլ. sloping shoulders, ֆր. des épaules tombantes:

¹⁵ Ականջակալ - տե՛ս թիւ 23 ծանօթագրութիւնը:

¹⁶ Զանփոլադեան, էջ 149-157:

¹⁷ Նոյն, էջ 153:

¹⁸ Կարո Ղաֆադարեան, «Միջնադարեան Ապակեգործութիւնը Դուինում», *Պարմաքանասիրական Հանդէս*, 1975, 4 (76), էջ 81:

¹⁹ Ձեռագիրը ներկայիս կը գտնուի Բրիտանական Գրադարանին մէջ (British Library, Add. MS. 19352):

²⁰ Կիթառ-նախաջութակ = անգլ. guitar fiddle:

²¹ Երուպայի մէջ, դարերու ընթացքին, երաժիշտներու եւ նուագարանագործներու (luthier) համատեղ աշխատանքի արդիւնքը աղեղնային գործիքներու տարբեր ընտանիքներու բնորոշ տարրերով նոր գործիքներու խաչասերումը եղաւ: Այս փորձերը անելի կատարեալ նուագարաններ ստեղծելու բնական միտում մըն էին: Ուշ միջնադարեան ժամանակաշրջանին երեւան եկան այնպիսի այլաբնոյթ տարրերով նուագարաններ, զորս կարելի չէ մեքենաբար դասակարգել, առանց նկատի ունենալու պատմական ատաղձը եւ զարգացման երբեմն կամայական ու բռնազբօսիկ երեւոյթները: Այս տարբերակներուն մէջ, ժամանակակից ջութակը յարատեւման բոլոր պայքարէն յաղթական դուրս եկաւ:

²² Յիցիկեան, էջ 32-36:

²³ Վզիկ = կոթ = պարանոց, անգլ. neck, ֆր. manche:

²⁴ Գլխիկ = ականջակալ, անգլ. pegbox, ֆր. cheville:

²⁵ *Մարեան Ողբերգութեան*ի Բան ՂԲ.ը կարելի է կարդալ համացանցի հետեւեալ կայքէջերուն մէջ՝ www.lusamut.net/level2_php?id=17&id_2=289&cat_1&s=17 (գրաբար) www.gisher.ru/grigor-narekaci-matean-oghbergo-tean-t14654-90.html (արեւելահայերէն) :

²⁶ Ինքնահունչ = idiophone:

²⁷ Գրիգոր Նարեկացի, *Նարեկ - Մարեան Ողբերգութեան*, գրաբար բնագիր եւ աշխարհաբար թարգմանութիւն Գարեգին Եպս. Տրապիզոնի (Խաչատուրեան), Պուենոս Այրէս, Տպ. Արարատ, 1948, էջ 247

²⁸ Հրաչեայ Աճառեան, *Հայերէն Արմատական Բառարան*, Հտր. 4, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., 1979, էջ 132:

²⁹ Տե՛ս՝ Զաւէն Կենեզեան, «Հայկական Աւանդական Շաւառ Աղեղնային Նուագարանի Մասին», *Բազմավէպ*, 2009, էջ 260-304:

³⁰ Շաւառի եւ *քամանի*ի կառուցումաճախին նմանութիւնը մէկ կողմէ եւ քիչ գործածուիլը միւս կողմէ պատճառ դարձած են, որ անուններու շփոթ մը տիրէ, որ, դժբախտաբար, դեռ կը յարատեւէ մեր օրերուն: Երկու գործիքներուն համար անկաշկանդ կը գործածուի քեմանի անունը: Համշէնահայերը մինչեւ օրս շաւառը կ'անուանեն քեմենչէ, իսկ քամանին՝ քեմոնա:

³¹ Շշածեւ աղեղնային, անգլ. bottle shaped fiddle:

³² Մեծ հաւանականութեամբ, երուպական զանազան աղեղնային գործիքներ հայերու մէջ ներթափանցած են շատ անելի հին ժամանակ, ըստ երեւոյթին՝ ԺԶ.-ԺԷ. դարերուն, մանաւանդ Օսմանեան Կայսրութեան սահմաններուն մէջ: Այս ենթադրութիւնը ուժ կը ստանայ երբ կը տեսնենք, որ հայ երաժիշտներու մէջ տարածուած էր սինէքէման կոչուած նուագարանը, որ երուպական viola d'amoreն է իր յատկանշական ձայնադարձիկ լարերով: Բաւ է նշել նշանաւոր վարպետ Սինէքէմանի Յակոբի գործունէութիւնը յատկապէս ԺԹ. դարու

առաջին կէսին: Զութական ալ կանուխ յայտնուեցաւ թրքահայոց մէջ. նշանատր ջութակահարներ եղած են, օրինակ, Համբարձում Լիմոնճեան (1769-1839) եւ Պետրոս Չէմլէքճեան (1785-1840):

³³ Նելլի Սահակեան, «Քամանչա», Սովետական Արուեստ, 1984, թիւ 9, էջ 57:

³⁴ Ձայնադարձիկ լարեր = անզլ. sympathetic strings կամ resonance strings, ֆրանս. cordes sympathiques:

³⁵ Ձայնադարձման անցքեր = ձայնադարձիչներ (որոշ տեղեր նաեւ արծազանգատու բացուածքներ), անզլ. sound holes, ֆրանս. des ouïes:

³⁶ «Դուին քառեակ»ի կազմի մէջ էին՝ Դուինի ջութակը, Պախի «viola pomposa»ն, «լարային երգեհոն»ը չորս լարանի բայց 120 ձայնադարձիկ լարերով եւ Դուին-թաւջութակը:

³⁷ Ոտնադիրք միջնադարաջութ = իտալ. “viola da gamba”:

³⁸ Այս գործիքը երաժիշտ Գրիգոր Առաքելեանի եւ Երիցեանի համատեղ աշխատութեան արդիւնքն է: «Հայկական վիոլա»ն 6 լարանի իւրայատուկ աղեղնային «մեծ բամբիռ» մըն է:

³⁹ *Զիւանու Քնարը*, Երեւան, Հայպետհրատ, 1959, էջ 398-399:

THE “DVIN VIOLIN”, A MEDIEVAL MUSICAL INSTRUMENT FROM ARMENIA

(Summary)

ZAVEN KNIAZIAN

zavenkniasian@yahoo.com.ar

In 1953, a beautifully decorated bottle-shaped glass receptacle was excavated from the archaeological site of Dvin, ancient capital of Armenia, and dated from the late-10th-early-11th century. The finding was considered groundbreaking, since one of the decorative figures depicted on the receptacle was a musician sitting on the floor in a typically eastern position. Unlike traditional Oriental musicians, he held a violin-like instrument on his shoulder.

In 1961, a funerary monument (*khachkar*) was found in Harich, in the Artik district of present-day Armenia. It also depicted the figure of a musician with a proto-violin on his shoulder, sitting on the floor in an eastern position. The inscription on the monument includes the date 1245.

These instruments combine typical Western and Oriental elements:

- Both are bowed instruments with lateral pecks from the medieval violin family.
- Both musicians are not standing, but sitting on the ground in an eastern position.
- Both musicians hold their instruments in “*a braccio*” position, which was totally unknown in Armenia and in the Orient at that time.
- Both findings are very close chronologically, as the items belonged to the same historical period, roughly speaking.

The presence of these instruments in Armenia leads us to conclude that they were called *jutak* (ջութակ), an unknown string instrument mentioned by poet Grigor Narekatsi in the tenth century. The name is currently used to refer to the modern violin.